

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՏՆՏԻՈՐՀՈՒՄ

Ի կատարումն դիրեկտիվ օրգանների ցուցումների, Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհուրդը որոշել է կազմակերպել հետևյալ նոր գործարաններն ու ցեխերը.

I. Էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության վարչության գծով

1. Միկրոէլեկտրաշարժիչների գործարան Լենինական քաղաքում, մահճակալների գործարանի շենքերի բազայի վրա, տարեկան 300 հազար հատ միկրոէլեկտրաշարժիչներ, 90 մլն. ռուբլի գումարով թողարկելու կարողությամբ:

2. Ճշգրիտ տեխնիկական քարերի գործարան Արզնիգէսի շինարարության նախկին ավանում, ժամացույցի և սարքաշինական արդյունաբերության համար սինթետիկ կորունդից 100 մլն. հատ Ճշգրիտ տեխնիկական քարեր և 500 մլն. հատ նախապատրաստուկներ, 120 մլն. ռուբլի գումարով թողարկելու կարողությամբ:

3. Էլեկտրակերամիկայի և կիսահաղորդիչների գործարան Երևան քաղաքում, տարեկան 15 մլն. հատ էլեկտրակերամիկական առարկաների ու հաստատուն մագնիսների թողարկումով:

4. Էլեկտրաապակեմեկուախիչների գործարան, որը արտադրելու է ապակեթել և ապակե գործվածք: Գործարանը կազմակերպվում է կառուցվող Աթարբեկյանգէսի Մաղկունք ավանում:

5. Գործադիր մեխանիզմների գործարան Սևանում, տարեկան 10 հազար մեխանիզմներ թողարկելու կարողությամբ և 15 մլն. ռուբլու արտադրանքով:

6. Երևանի ժամացույցի գործարանին կից՝ արտաքին գեղարվեստական ձևավորման դետալների արտադրության ցեխ, տարեկան 80 մլն. ռուբլի գումարով, 500 հազ. ժամացույց թողարկելու կարողությամբ:

II. Մեքենաշինության և հաստոցաշինության վարչության գծով

Ճշգրիտ հաստոցների գործարան Կիրովական քաղաքում, որը փոքր դաբարիտների հաստոցներ է արտադրելու ժամացույցի և սարքաշինական արդյունաբերության համար, տարեկան 30 մլն. ռուբլի ծավալով, 4500 հաստոց թողարկելու կարողությամբ:

III. Շինանյութերի արդյունաբերության վարչության գծով

Էլեկտրատեղակայման և այլ առարկաների համար կերամիկական դետալների արտադրության ցեխ, տարեկան 15 մլն. ռուբլի արժողությամբ, 1200 տոննա արտադրանք թողարկելու կարողությամբ:



Առաջավոր տեխնոլոգիական պրոցեսներ մշակելու, դրանք մեքենայացնելու և ավտոմատացնելու, մեքենաների ու հաստոցների, հատուկ գործիքների ու սարքավորանքի նոր տեսակներ նախագծելու, արտադրության մեջ առաջավոր տեխնիկական արմատավորելու դժուր ձեռնարկություններին տեխնիկական օգնություն ցույց տալու նպատակով Ժողովրդական տնտեսության խորհրդի որոշմամբ կազմակերպվում են.

1. Տնտհաշվարկային հատուկ կոնստրուկտորա-տեխնոլոգիական բյուրո (ՀԿՏԲ)՝ Մեքենաշինության և հաստոցաշինության վարչության գոյություն ունեցող տնտհաշվարկային կոնստրուկտորական գրասենյակի բազայի վրա:

2. Հատուկ կոնստրուկտորական բյուրո (ՀԿԲ)՝ Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչության կից Էքսպերիմենտալ բազայով կահույքի նոր կոնստրուկցիաներ, տեխնոլոգիական պրոցեսներ մշակելու և փայտամշակման

բնագավառում էքսպերիմենտալ աշխատանքներ կատարելու համար:



Հայաստանի ԿԳ Կենտկոմի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշման համապատասխան, ձեռնարկությունների նյութա-տեխնիկական մատակարարման հետևող բարելավման նպատակով ռեսպուբլիկայի Ժողովրդական տնտեսությունից խորհուրդը, վերակազմելով մատակարարման ու վաճառահանման գոյություն ունեցող սիստեմը, որոշել է ստեղծել նյութա-տեխնիկական մատակարարման զլխավոր վարչություն, որի իրավասությունն են հանձնված ռեսպուբլիկական վաճառահանման հետևյալ գրասենյակները. Գլավնեկոմսոբիտի Հայկական վարչությունը, Գլավնեկոմսոբիտի, Գլավավտոտրակտորսոբիտի, Գլավխիմսոբիտի և Գլավէլեկտրոսոբիտի Հայկական գրասենյակները, Գլավբուսոբիտի Հայկական գործակալությունը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետպլանին կից նյութա-տեխնիկական մատակարարման վարչությունը:

Մատակարարող վերոհիշյալ կազմակերպությունների բազայի վրա Ժողովուրդի կազմակերպել է արտադրանքի մատակարարման և վաճառահանման ինը մասնագիտացված տնտեսչավարկային վարչություններ արդյունաբերության ճյուղերի գծով:

Նյութա-տեխնիկական մատակարարման ու վաճառահանման Գլխավոր վարչության վրա Ժողովուրդի խիստ պատասխանատվություն է դրել ինչպես Ժողովուրդի սիստեմի ձեռնարկություններում, այնպես էլ ռեսպուբլիկայի մյուս ձեռնարկությունների թողարկած արտադրանքի մատակարարման, պլանների և առաջադրանքների կատարման համար:



«Կտորչեմոն» Հայկական վարչության, Երևանի «Կտորչեմոն» Երևանի մթերման հրապարակի և Երևանի, Լենինականի ու Կիրովականի մի շարք մթերող գրասենյակների բազայի վրա Ժողովրդական տնտեսության խորհուրդը ստեղծել է «Արմվտորմետաիրո» ռեսպուբլիկական վարչությունը: Իր գործունեությունը իրագործելով տընտեսաշարակի հիման վրա, նոր վարչությունը պետք է

կատարի մթերում, երկրորդական հումքի և արդյունաբերական մնացուկների վերամշակում:



Գիտա-տեխնիկական համագործակցություն գծով սովետա-չեխոսլովակյան հանձնաժողովի XI սեսիայի արձանագրությունը և Հայկական ՍՍՌ Ժողովուրդի որոշմանը համապատասխան՝ գիտություն և տեխնիկայի վերջին նվաճումներին ծանոթանալու համար Չեխոսլովակիայի արդյունաբերական ձեռնարկություններ գործուղվեց Հայաստանի մասնագետների մի մեծ խումբ:

Չեխոսլովակիայի արդյունաբերական ձեռնարկությունների առաջավոր փորձը գործնականում արմատավորելու նպատակով Ժողովուրդի ջրհանարկից հայ մասնագետների ուղևորության արդյունքներն ու նրանց ներկայացրած առաջարկները: Որոշում է ընդունվել 1958 թվականի ընթացքում, ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպել արտադրանքի նոր տեսակների թողարկում և չեխոսլովակյան գործարանների փորձի հիման վրա լայնորեն օգտագործել արդյունաբերական մնացուկները:

Ժողովուրդի Քիմիական արդյունաբերության վարչությանը հանձնարարվել է մի շարք ձեռնարկությունների արտադրության մնացուկներից երկվանի ռետինատեխնիկական գործարանում կազմակերպել ռետինի թիթեղների արտադրություն, իսկ Կիրովի անվան գործարանում յուրացնել սանիտար-հիգիենիկ առարկաների թողարկումը մնացուկներից՝ լատեքսներից:

Կիրովի և Մյասնիկյանի անվան կահույքի, ինչպես նաև աթոռների ֆաբրիկաներում մինչև տարվա վերջը նախատեսված է յուրացնել խոհանոցային գարնիտուրների հավաքածուների, պահարանների, կլոր սեղանների, գրասեղանների ու գրապահարանների, ինչպես նաև փայտատաշեղանի սալերի նոր նմուշների արտադրությունը: Ժողովուրդի Քիմիայի գիտա-հետազոտական ինստիտուտի համագործակցությամբ Լենինականի ապակու գործարանը պատրաստելու է ապակի եփելու փորձնական տեղակայում՝ ապակյա և հախճապակյա իրեր արտադրելու համար: Բացի այդ, այստեղ կարգավորվելու է լուսավորության արմատորայի պատրաստման համար անհրաժեշտ ապակյա առարկաների թողարկումը: